

ԳՐԱԽՅՈՍՈՒԹԻՒՆ

«Սուրիա եպիսկոպոս Պարզեանցի նամակը գրուած Ս. Էջմիածնի Սինոդի ասեմապետի տեղակալ Գեղ. Երեմիա եպիսկոպոս Գալստեանի անուան», Երեւան, սպարան Այվազեանց եւ Նազարեանց, 1907 թ., էր. 131, գինը՝ 60 կոպ.:

Հեղինակը այդ «Նամակը» գրել է 1892 թ. իր առաջին աքսորավայր՝ Արեւիլ քաղաքից Երեմիա եպիսկոպոսի «յանձնարարութեամբ և թոյլտուութեամբ» Արարատում հրատարակուած յօդուածի գէմ, որ, սակայն, ձեռքիս տակ չունեմ:

Թէպէտ հասցէտիրոջ վախճանուած լինելով՝ նրա գէմ արուած մերկացումներն պէտք է մնան անպատասխան — որով և քննադատութիւնը դատապարտուած է միա կողմանի լինելու, — այսու ամենայնիւ, վատ չէր լինի, եթէ գործին մօտիկից ծանօթ անձերի կարծիքներն էլ լսուէին հրապարակով, ինչպէս ինքը հեղինակն էլ է ցանկանում, ասելով «հարկաւոր ենք համարում տպագրութեամբ հրատարակել՝ ըստմաթիւ տեղեակ անձնաւորութիւնների կենդանութեան ժամանակ և հրաւիրել նոցա արդարասիրութիւնն՝ վկայել ճշմարտութեան: Յամենայն դէպս, մեր եկեղեցու վարիչների ներքին գործունէութիւնը այն աստիճան ծածկուած է մնացել ժողովրդի աչքից, որ — եթէ նամակագիրը մինչ անգամ ազատութիւն լինի տուած իր գրչին և մեղանշած՝ արդարութեան գէմ (որ չեմ կարող ենթադրել), — շատ լաւ է արել, հատարակութեան սեփականութիւն դարձնելով այնպիսի արարքներ, որոնք, որոշ չափով, լոյս են սփռում Մայր—Աթոռի պատմութեան վրայ:

Ս, յն բոլորը, ինչ որ գրել է Սուքիաս եպիսկոպոսը, ընդունելով իբրև ճշմարտութիւն—քանի դեռ չէ ապացուցուել հակառակը—կարգացողը գալիս է այն եզրակացութեան, որ վարչութեան ղեկն իր ձեռքն առած եպիսկոպոսի քմահաճոյքին շատ բան է զոհ գնացած, վտանգի ենթարկելով նոյն իսկ ողջ հիմնարկութեան պրեստիժը:

Կարգալով 127 տպագրական երեսից բաղկացած պատասխան—նամակը, չէք կարող հաճութեամբ չնկատել, որ Մակարի կաթողիկոսութեան շրջանում, հայ եկեղեցականութիւնը, ի դէմս Սուքիաս եպիսկոպոսի, ունեցել է մի անդամ, որ ջերմ կերպով նախանձախնդիր է եղել տիրող կարգերի բարեփոխման, արթուն պահապան՝ նախնիներից մեր ձեռքը հասած թանգագին աւանդների ու աւանդութիւնների և սուր խթան՝ ամենատեսակ ոտնձգութիւնների դէմ:

Մի առ մի առաջ բերել այստեղ այն բոլոր կէտերը, որոնցով, ըստ ինքեան, բնորոշում են՝ եկեղեցու վարչութեան ղեկը միմեանց հակառակ ուղղութեամբ տանող՝ այդ երկու եպիսկոպոսները, աւելորդ է, ի հարկէ, քանի որ նրանք երկրորդական, երբեմն էլ չնչին նշանակութիւն ունեցող մանրամասներ էլ շատ են շոշափում: Ս, յդ պատճառով ես բաւականանում եմ, միայն գլխաւորները յիշելով:

Նամակագրութիւնն առաջ է եկել նրանից, որ Մակար կաթողիկոսի մահից յետոյ, 1891 թ. «Արարատը», գեկտեմբերից սկսած, նկարագրել է «այն ամէն անախորժ հանգամանքներն՝ որոնք իբրև թէ առիթ են եղած իմ և Ներսէս սրբազան եպիսկոպոսի աքսորման»:

Անցքերի պատկերը լաւ ըմբռնելու համար՝ պէտք է գիտենալ, որ Երեմիան փառասէր, մանաւանդ թէ իշխանութիւն սիրող ու «ջրատար»*) մարդ էր, ուժաւորուած՝

*) Հեղինակի ասելով՝ նա «գրքակալից վախեցող է եղել. առանց անհետեթ սխալներն՝ չէ՛ եղել կարգալիս իր տիտղոսի պատշաճ գրքերն ու աղօթքները»:

Սեգրակեան եպիսկոպոսի մենտորութեամբ:

Միմեանց տրամագծօրէն հակառակ վարիչների միջև ընդհարումը, բնականաբար, անխուսափելի պէտք է լինէր: Ու մենք տեսնում ենք նրանց՝ իրար դէմ դուրս եկած: Երեմիա ու Արիստակէս եպիսկոպոսները—ինչպէս հաւատացնում է հեղինակը—իրանց ապագայ դիրքն ապահովելու մտքով, ձեռքներն առնելով էջմիածնի պաշտօնական թերթը, մեղադրանքներ է, որ անխնայօրէն բարդել են կաթողիկոսի վրայ: Ու, որպէս զի առաջինը կարողանայ աջողեցնել կաթողիկոսական իր թեկնածութիւնը, մաքրում է Մայր—Աթոռի մթնոլորտը, հալածելով ոչ ձեռնառու միաբաններին և նրանց տեղը հաւաքելով իր կողմնակիցներին: Հալածանքների ամենադառը բաժինն ընկնում է Սուբիաս ու Ներսէս եպիսկոպոսներին, որոնք արքայութեամբ են Ռուսաստանի հեռաւոր նահանգները:

Առաջին ընդհարումը տեղի է ունեցել կաթողիկոսարանի կայքերն արձանագրելիս, Մինչդեռ իրաւատէր Երեմիայի թոյլաութեամբ, Կովկասի նախկին կառավարչապետի պատգամաւոր Ամբարդանեանն ու Սինոդի դատախազն էլ են արտօնում ներկայ լինելու իրերի ցուցակագրութեանը, կաթողիկոսի հոգեգաւակ Սուբիասը «օրէնքը» մատնանշելով, աւելորդ է համարում նրանց ներկայութիւնը. սակայն, յաղթութիւնը մնում է ուժի կողմը,—և օտար տարրը մուտք է գործում հայ վեհարանը: Ներկայ է և Վաղարշապատի քննիչը: Գաղափար տալու համար, բերում եմ խօսակցութիւններից մի—երկուսի նմուշները:

1. ՔՆՆԻՇ. Ամբարդանեանն կառավարչապետի անձն ներկայացնող էր. եթէ նոյն իսկ փոխարքայն կամենար ներկայ լինել այն գործողութեան՝ ինչ պէտք է անէիք:

Սուբիաս Եպ. նոյնն, ինչ որ արուեցաւ պ. Ամբարդանեանին, ըստ որում Ռուսաստանում օրէնքից բարձր միայն և եթ կայսեր անձնաւորութիւնն է ճանաչուած:

ՔՆՆԻՇ. Դուք ինչ վնաս էք տեսնում կողմնակի մարդկանց ներկայութեան մէջ:

Սուփիաս եպ. Ես իմ անձիս—իբր Սինոդի անդամի արհամարհանքն և անպատուութիւնն եմ տեսնում այլոց ներկայութեամբ:

2. Ամբարդանեան. Ապագայ թեկնածուի համար բացարձակ աշխատութիւններ չլինին Ձեր և անդամների կողմանէ՝ այս և այն անձնաւորութեան ընտրութիւնն յաջողցնելու, ըստ որում տէրութիւնն ունի արդէն ի նկատի իւր ընտրելին:

Սուփիաս եպ. Անհնարին է՝ որ ես և միւս անդամք, իբրև ձայնաւոր ընտրողներ, չաշխատենք մեր ընտրելի հովուապետն ունենալ . . . մեր բաղձանքն պէտք է լինի՝ որ ընտրելին ունենայ գերազանց չափով Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնուրոյնութեան նախանձախնդրութիւն . . . բանիմաց հայ հոգևորականի գլխաւոր առաքինութիւնն է՝ հաւատարիմ հպատակութիւն օրինաւոր իշխանութեան և կենդանի մարտիրոս եկեղեցւոյ հաստատութեան:

Բերք Տէր—Պետրոսեանց անունով՝ Սինոդի պաշտօնեայի բանտարկուելովը օրագիր է կայանում նրան արձակելու և Բենիամին Տէր—Գրիգորեանցին նրա տեղը կարգելու մասին: Իսկ Երեմիան պահանջում է, որ Մինաս Պանճուլազեանցը նշանակուի:

3. Երեմիա. Ես՝ իբրև կաթողիկոսական տեղապահ, իմ արտօնութիւնները պէտք է գործադրեմ և, ճանաչելով Բենիամինին անընդունակ, կարգում եմ Մինասին, ուստի այդ օրագիրը կմնայ անփոփոխ:

Սուփիաս. Մենք շատ ընդունակ ենք մեր գրաւած դատողական աթոռին, —այն ինչ անուններս ստորագրել չենք իմանում, —որ պահանջում ենք և խօսք մէջ բերում այլոց ընդունակութեան մասին:

Երեմիա. Ես այն զերծալին և թագաւորի պատկերին եմ խնայում, ապա թէ ոչ՝ ես գիտեմ, թէ Ձեզ հետ ինչպէս կվարուեմ, եթէ այդ խօսքերը դուրսն ասած լինէիք:

Աւելորդ չեմ համարում նոյնպէս ցոյց տալ, թէ տեղապահ Երեմիան ինչպէս է եղել վերաբերուելիս տիրա-

ցուների ձեռնադրութեան փափուկ հարցին: Նա շարունակ թղթակցութեան մէջ է եղել Խորէն և Աղաջանեանց քահանաների ու Գրիգոր եպիսկոպոսի հետ: Հեղինակը բերում է դրանց ուղղած տասը նամակ, որոնց մէջ տեղապահը վերջիններին աւետում էր «յիշած տիրացուների ձեռնադրութեան հրամանը հանելով, ուղարկեցի ձեզ», «կինդրեմ, որ նորա որդու գործերը, որքան կարելի է, շուտով ուղարկէք Սինոդին», «տիրացու Յարութիւնի ձեռնադրութեան մասին ոչինչ չստացայ, որի հայրը մեծ խոստումներ էր անում Ձեր սրբազնութեան միջնորդութեամբ, ոչ ապաքէն ես էլ ուրիշներին եմ խոստացել . . . թող իրանց խոստումներ կատարեն լիովին», «կինդրեմ յայտնել ինձ, թէ՛ եթէ ես աշխատեմ, . . . արդեօք մի նիւթ կլինի մէջտեղ», «ձոճկան գիւղացի տիրացու Աւետիք Վարդումեանցը իւր գործի համար խոստացել է երկու հարիւր ռուբլի, և գործը իմ աշխատութեամբ վերջացաւ և շուտով հրամանը կստանանք», «Նիկողայոս Խեչանեանցի պսակի գործի համար, որ գլուխ եկաւ . . . իմ աշխատութեամբ, կցանկայի ինձ յայտնի բաւական ստացած գումարիցդ անմասն չթողնէիք ինձ»:

Երկու նկատում էլ՝ հեղինակի այլ և այլ պատճառաբանութիւնների առիթով:

Ա) Խօսելով քահանայացուների մասին, նա ասում է Երեմիային. «Ի՞նչ ինքներդ ասացէք, վիճակային ատեանն՝ որոյ նախագահն էի համարւում, կարող էր խնդրատու ժողովրդի աղերսագրերին ընթացք չտալ . . . ուրեմն, Դաւալու գիւղի Արսէն Տէր-Իսահակեանցի . . . վկայականի գնահատութիւնն և նորա ձեռնադրութեան կոչուիլն ինձ կկարմրացնեն հասարակաց դատաստանի առաջ, թէ Սինոդին՝ որոյ նախանդամ լինելու պատիւն ունէիք»:

Ինձ թւում է, թէ ձեռնադրութեան վսեմ գործը այսպիսի չնչին պատճառաբանութիւնով չի կարող արդարանալ: Վիճակային ատեանը շատ լաւ կարող էր ժողովրդի խնդիրներին ընթացք չտալ ու «անուաներին» ձեռնադրել: Ժողովուրդը, ամբոխը յաճախ ոչ յարգելի

չառ առաջարկներ, անտեղի պահանջներ և անյարմար ընտրութիւններ է անում, կոնսիստորիան միթէ պարտաւոր է առանց բաղմակողմանի կշռադատութեան և ամենալուրջ վերաբերմունքի, անպայման ձեռնադրութեան առաջարկ անել Սինոդին՝ միմիայն այն պատճառով, որ ժողովուրդն է ընտրել ու առաջարկել, էլ ուր մնայ առաջնորդի նշանակութիւնը, եթէ նա չպէտք է առաջնորդի ժողովուրդին. ուր մնայ առաքեալի պատուէրը. «Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես» ու սրանց նմանները. Տէր Իսահակեանցների ձեռնադրութիւնը՝ առաջ նրանց մասին առաջարկ անողի երեսն է կարմրեցնում, յետոյ՝ հրաման տուողի. նրանց ձեռնադրութեան գործում ողջ եկեղեցական իշխանութիւնն է պատասխանատու հասարակական դատաստանի առջև, այն էլ կըրկնում եմ, նախ՝ կոնսիստորիան, յետոյ՝ Սինոդը, մանաւանդ՝ առաջնորդը, յետոյ՝ տեղապահը:

Բ) Հեղինակը շարունակում է. «Եթէ Բէկլըղաղլու դիւղի համար՝ որ 150 տուն է, երեք քահանայ ունենալէն յետոյ, կոնսիստորիայն ինձնով հանդերձ յանցաւոր է համարուում չորրորդի համար առաջարկութիւն անելովն, հապա ինչպէս ԲՏՆի դիւղն, 50 տուն լինելով մի նորընծայ քահանայ ունենալով, երկրորդն ևս ձեռնադրուեց, իբրև իւր դառամեալ հօրն օգնական, և այսպիսով միաժամանակ այնտեղ գտնուեցին երեք քահանայք...»:


Մի և նոյն է թէ մէկը ամէն յանցանք գործի, բայց արդարանայ միայն նրանով, որ ուրիշներն աւելի մեծ չափով են գործում: Ո՛ւմ և է արած սխալը միթէ մեզ իրաւունք է տալիս, որ մենք էլ անենք նոյն սխալը, թէկուզ ամենափոքր չափով:

Ի՛նչ էլ լինի. քանի որ հայութեան մարմնի հիւանդոտ մի մասն էլ մեր եկեղեցականութիւնն է, պէտք է միշտ ցոյց տալ նրա վէրքերը, որպէս զի ամբողջ կազմուածքը շտուժի: Այսպիսի գրուածքները, — եթէ մինչ անգամ չկարողանան մեր եկեղեցու ղեկավարների դէմքերն իսկութեամբ վերականգնել, — արած կլինեն գոնէ այն ծա-

ապուլթիւնը, որ նաւին գլուխ կանգնողները նկատի կու-
նենան ապագայի դատաստանը:

Այս կողմից՝ Սուքիաս եպիսկոպոսի «Նամակը» անար-
ժէք գրուածք չէ:

Էմմ. Բահ. Նազարեանց.



Ազգային Եկեղեցի. Կ. Վ. Բագու, 1907 թ. 48 եր.
գինն է 20 կ.

Այս տետրակի ծագումը կապուած է մի քարոզի հետ,
որ հեղինակը խօսել է մարտի 27-ին Բագուում՝ Լուսա-
ւորչի տօնի առթիւ: Մի քանի բարեկամներ ցանկութիւն
են յայտնել տպագրուած տետրակն այդ քարոզը, իսկ սօ-
ցանից մէկը՝ Արժ. Ղևոնդ ա. քահանայ Տէր Աստուա-
ժատրեանցը՝ իւր վրայ է առել տպագրութեան ծախքը:
Եւ ահա հեղինակը ի կատարումն այդ ցանկութեան, գրի
է առել և տպագրութեան յանձնել այն:

Կ. Վ. այս տետրակում մաքառում է Հայոց եկեղեցու
և հոգևորականութեան մէջ կղերական ոգի որոնողների
գէմ, մի թիւր և մտացածին գաղափար, որ վերջին տա-
րիներս արհեստական կերպով դրուած է հրապարակի
վերայ և հետզհետէ նստել է մի կարգի գործիչների գըլ-
խում: Նա մի համառօտ տեսութեամբ պարզում է արե-
ւելեան և արևմտեան եկեղեցիների ծագումն ու բնորոշ
յատկութիւնները և ապա համեմատելով Հ. եկեղեցու հետ,
ցոյց է տալիս, որ այստեղ կղերականութեան գաղափարը
ծագել և զարգանալ չէր կարող՝ ազգային բնաւորութեան,
կրթական ոգու և հալածական վիճակի պատճառով: Հ.
եկեղեցին ազգային է, որովհետև նրա ծագման և զար-
գացման մէջ պետական-քաղաքական գաղափարները դեր